# ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՔ, ԵԹԵ ՉՂՋԻԿ ԳՏՆԵՔ

## ՉՂՋԻԿՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԻՆԵՐ ԵՆ

Հասարակության անդամների կողմից չղջիկ սպանելը, վնասելը կամ պահելը անօրինական է:

## ԵԹԵ ԴՐՍՈՒՄ ԳՏՆԵՔ ՉՂՋԻԿ, ՈՐԸ ՀԻՎԱՆԴ Է, ՉԻ ՇԱՐԺՎՈՒՄ ԿԱՄ ՍԱՏԿԱԾ Է՝

Չղջիկի վրա տեղադրեք տուփ կամ դույլ և զանգահարեք կենդանիների վերահսկման ձեր տեղական մարմիններին՝ այն ստուգման տանելու համար:

## ԵԹԵ ՁԵՐ ՏԱՆ ՄԵՋ ՏԵՍՆՈՒՄ ԵՔ ՉՂՋԻԿ ԵՎ ՉԵՔ ՏԵՍԵԼ, ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ԱՅՆ ՆԵՐՍ ՄՏՆԵԼ՝

Բաց մի թողեք չղջիկը: Դուրս եկեք և փակեք սենյակը (դուռը և պատուհանները): Եթե անվտանգ է, չղջիկի վրա տուփ կամ դույլ դրեք՝ այն բռնելու համար: Մարդկանց և տնային կենդանիներին հեռու պահեք չղջիկից: Այս դեպքում կարևոր է զանգահարել կենդանիների վերահսկման մարմիններին՝ այն ստուգման տանելու համար*:

## ԵՐԲԵՔ ՄԵՐԿ ՁԵՌՔԵՐՈՎ ՄԻ ԴԻՊԵՔ ՉՂՋԻԿԻ

Սովորեցրեք երեխաներին և ընտանիքի անդամներին երբեք չդիպչել չղջիկներին և զգուշացնել մեծահասակներին, եթե չղջիկ հայտնաբերվի գետնին կամ տան ներսում:

## ՉՂՋԻԿՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՓՈԽԱՆՑԵԼ ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ

Կատաղությունը մահացու հիվանդություն է ինչպես մարդկանց, այնպես էլ ընտանի կենդանիների համար, ինչպիսիք են շներն ու կատուները: Ցանկացած չղջիկ, որը հավանական շփում է ունեցել մարդու կամ ընտանի կենդանու հետ, պետք է հեռացվի կենդանիների վերահսկման մարմինների միջոցով և ստուգվի Հանրային Առողջության Վարչության կողմից:

## ԿԱՏԱՂՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կենդանու խայթոցից կամ չղջիկի հետ շփումից հետո զանգահարեք 213-288-7060 կամ էլ. նամակ ուղարկեք vet@ph.lacounty.gov հասցեին: Գրասենյակի ժամերն են երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 5:00-ը:

## ԺԱՄԱՆԱԿԻՆ ԱՐԵՔ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ՄԻԱՅՆ ՓԱԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇՆԵՐԻ ՈՒ ԿԱՏՈՒՆԵՐԻ ԿԱՏԱՂՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ

---

## ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵՔ ՄԵԶ ՀԵՏ

Անասնաբուժական Հանրային Առողջություն
Հեռախոս՝ 213-288-7060
Էլ. հասցե՝ vet@ph.lacounty.gov
Կայքէջ՝ publichealth.lacounty.gov/vet
*Զանգահարեք 211՝ ձեր տեղամասի կենդանիների վերահսկողության մարմինը գտնելու համար

COUNTY OF LOS ANGELES Public Health

(Armenian)